ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 3-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում պատարագեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

Երեկոյան ժամը 5-ին Մայր տաճարում ավանդական հանդիսավորությամբ կատարվեց «Ոտնալուա»-ի արարողությունը, լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ

Ժամը 7-ին սկսվեց խավարման գիշերի արարողությունը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ «Սիրտ իմ սասանի վասն Յուդայի» բնաբանով քարոզեց տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

Նույն օրը Մայր Աթոռ այցելեց «ՆյուՅորք թայմս» թերթի թղթակից Հենրի Կեմը՝ իր կնոջ հետ միասին։ Հյուրերը եղան Մայր տաճարում, թանգարանում։

Հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը Մայր Աթոռ ժամանեց ևս հնդիկ մալաբար եկեղեցու միաբան բարեշնորհ Զաքարիա սարկավագը։ Բարեշնորհ հյուրը չորս օր Մայր Աթոռում մնալուց հետո, մեկնեց մարտի 7-ին։

*
* *

Ապրիլի 4-ին, ուրբաթ.—Յիշատակ շարշարանաց և խաչելութեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան ժամը 10-ին Մայր տաճարում կատարվեց «Կարգ խաչելութեան»՝ գլխավորությամբ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի։

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ Մայր տաճարում կատարվեց «Կարգ թաղման»։

*
* *

Ապրիլի 5-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ճրագալոյց Զատկի.

Մայր տաճարում կատարվեց առավոտյան ժամերգություն՝ ճեմարանի սաների կատարմամբ։

Երեկոյան ճրագալույցի ժամերգության ժամանակ, ճեմարանի սաները ընթերցեցին Դանիելի գիրքը։ Ավագ սեղանի վրա ճրագալույցի ս. պատարագ մատուցեց տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

*
* *

Ապրիլի 7-ին, երկուշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ նվիրված համայն հայ ժողովրդի ննջեցյալների հիշատակին։

*
* *

Ապրիլի 11-ին, ուրբաթ.—*Կեսօրից հետո, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Վեհարանում գումարվեց Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի հերթական նիստը, որը քննարկեց Մայրավանքի շրջափակում, հին Վեհարանում և Գեղարդավանքում վերանորոգչական աշխատանքների ընթացքը։*

*
* *

Ապրիլի 13-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր Կիրակէ).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։ «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց» բնաբանով։

* * *

Ապրիլի 17-ին, հինգշաբթի.—Հոգևոր ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ ջութակի համերգ՝ մասնակցությամբ ջութակահար Հրաչ Սվաճյանի։ Դաշնամուրի վրա նվագակցում էր ջութակահարի քույրը՝ Սիրվարդ Սվաճյանը։ Կատարվեցին հատվածներ դասական երաժշտական ստեղծագործություններից։ Վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը շնորհակալություն հայտնեց արվեստագետ քույր և եղբայր Սվաճյաններին և նրանց բարեմաղթեց նորանոր հաջողություններ ապագայում։

* * *

Ապրիլի 20-ին, կիրակի.—Աշխարհամատրան Կանաչ Կիրակէ.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց տ. Հովհաննես քհն. Մարուքյանը՝ «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա» բնաբանով։

* * *

Ապրիլի 24-ին, հինգշաբթի.—«Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց որ կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի».

Ապրիլյան եղեռնի հիսունչորսերորդ տարեդարձի առիթով Մայր տաճարում պատարագ մատուցեց և քարոզեց լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ «Զար քան զմահ անմեղին է ինձ կորուստ կենդանւոյն» բնաբանով։

Ապրիլյան եղեռնի նահատակների խնկելի հիշատակին, հավարտ ս. պատարագի, Մայր տաճարում կատարվում է հոգեհանգիստ՝ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։ Ապա Ն. Ս. Օծությունը եկեղեցական թափորով առաջնորդվում է՝ Մայր տաճարի հյուսիսային շրջափակում Ապրիլյան նահատակաց հուշարձանի մոտ, որտեղ ևս կատարվում է հոգեհանգստյան հատուկ արարողություն՝ հոծ բազմության ներկայությամբ։